

30.01.2019 թ .

գ. Նոր Կեսարիա

Տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչները, ավագանու անդամները, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ վարչության ներկայացուցիչ՝ Գևորգ Գևորգյանը

Ժողովի նախագահ՝ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ Մ. Սահակյան

Օրակարգ - Նոր Կեսարիա համայնքի ղեկավար Հ. Գալստյանի հաշվետվությունը 2018 թ. ամբողջ տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Զեկուցողը մանրամասնորեն ներկայացրեց Նոր Կեսարիա համայնքում 2018թ. ամբողջ տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

Հաշվետվությունում վերհանվեց համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու կողմից ձեռնարկված միջոցառումները, ինչպես համայնքի բյուջեյի կատարման, այնպես էլ համայնքի առկա խնդիրների լուծման ուղղությամբ :

Հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքի ավագանու անդամները, բնակիչները: Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Հրայր Գալստյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել լավ:

Համայնքի ընդհանուր ժողովը որոշեց՝

1. Համայնքի ղեկավար՝ Հ. Գալստյանի 2018 թ. ամբողջ տարվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունը գնահատել լավ:
2. Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2018 թ. ամբողջ տարվա ընթացքում հավաքագրված եկամուտները:
3. Համայնքի ավագանին և համայնքի բնակչությունը առաջարկեց համայնքի ղեկավար Հրայր Գալստյանին և համայնքապետարանի աշխատակազմին 2019 թ. ամբողջ տարվա ընթացքում իրենց գործունեությունը նպատակատուղղել համայնքում առկա

հիմնախնդիրների լուծման և համայնքի բյուջեյի սեփական եկամուտների հավաքագրման ամբողջական կատարման և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և բնակչությանը:

4. Համայնքում հիմնախնդիր է համարվում խմելու ջրի ներցանցային համակարգի ոչ բարվոք վիճակը:

5. Ապահովել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի նախատեսված հիմնախնդիրների իրականացումը:

Ժողովի նախագահ՝

Գ. Մելքոնյան

Քարտուղար՝

Մ. Սահակյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի համազյուղացիներ, ավագանու անդամներ, հյուրեր Ձեզ եմ ներկայացնում 2018 թ. -ի ամբողջ տարվա ընթացքում իմ կողմից Նոր Կեսարիա համայնքում կատարած աշխատանքների և բյուջեյի կատարման մասին հաշվետվություն :

Նոր Կեսարիա համայնքը կազմված է 270 տնային տնտեսությունից և ունի 1682 բնակիչ :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, համայնքի ավագանու և համայնքապետարանի կանոնադրությամբ և ընդունված որոշումներով համայնքի ՏԻՄ մարմինները իրենց գործունեությունը 2018թ.-ի ամբողջ տարվա ընթացքում հիմնականում նպատակաուղղել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, ինչպես նաև համայնքում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների որոշման և բարելավման հարցերին:

Չնայած 2018թ.-ի ընթացքում համայնքում չի ներդրվել որևէ խոշորամասշտաբ ծրագիր և համայնքին չի ցուցաբերվել համապատասխան աջակցություն համայնքում առկա հիմնախնդիրների լուծմանը, որոնք նախատեսված էին համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով, այնուամենայնիվ համայնքի բյուջեյի տնտեսված միջոցներով կատարվել են մի շարք աշխատանքներ:

2018թ.-ի ընթացքում համայնքի բյուջեյի միջոցներից համայնքի անապահով ընտանիքներին հատկացվել է սոց. օգնություն: Հունվարի 6-ին համայնքի Սուրբ Բարսեղ Կեսարացի եկեղեցում տեղի ունեցել սուրբ պատարագ, մատաղի արարողություն և հյուրասիրություն:

Ապրիլի 1-ին Սուրբ Զատիկի կապակցությամբ համայնքի Սբ. Բարսեղ Կեսարացի եկեղեցում նշվեց Քրիստոսի հարության տոնը, կազմակերպվեց մատաղի արարողություն և հյուրասիրություն համայնքի բնակիչներին:

Ապրիլի 7-ին դպրոցում տեղի է ունեցել միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության օրվան, մեր կողմից տրվեցին նվերներ ուսուցիչներին:

Մայիսի 25-ին դպրոցում տեղի ունեցավ Վերջին զանգին նվիրված միջոցառում, որի ընթացքում շնորհավորեցի և նվերներ հանձնեցի դպրոցի շրջանավարտներին:

Գիտելիքի օրվա կապակցությամբ նվերներ բաժանվեց դպրոցի 1-ին դասարանի երեխաներին և գերազանց սովորող աշակերտներին :

Սեպտեմբերի 8-ին և 15-ին <<Մաքուր Մոլորակ>> ծրագրի շրջանակներում իմ աջակցությամբ, համայնքի բնակիչների և դպրոցի մասնակցությամբ համայնքում անցկացվեց համապետական շաբաթօրյակ: Բացի համապետական շաբաթօրյակից համայնքապետարանի կողմից տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվում է շաբաթօրյակներ:

Համայնքում կատարվել է մոտ 2018 զծամետր խմելու ջրի ջրագծերի վերակառուցման աշխատանքներ, այն վերազինվել է նոր խողովակաշարերով՝ հիմնովին ավարտելով համայնքի խմելու ջրի ներցանցային համակարգի վերակառուցման աշխատանքները, նաև մասնակի վերանորոգվել է մշակույթի տան տանիքը , փոխվել են դռները:

Դեկտեմբերի 27-ին Ամանօրյա տոների կապակցությամբ համայնքում կազմակերպվեց միջոցառում, որի ժամանակ համայնքի մանուկներին բաժանվեցին ամանօրյա նվերներ, նորածին երեխաներին նվերներ՝ գումարային տեսքով , եղան անակնկալներ, որի ընթացքում համայնքի բնակիչները ունեցան իրային շահումներ:

Գումարային տեսքով նվերներ տվեցինք նաև համայնքում ապրող պատերազմի վետերաններին, զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով ընտանիքներին :

Համայնքը գազաֆիկացված է: Համայնքում գործում է ակումբ- գրադարանը, գործում է նաև բուժ-ամբուլատորիան :

Առկա է 2 առևտրի սրահ և 2 դեղատուն , որը ապահովում է բնակչության առօրյա կարիքները:

Համայնքում լուրջ հիմնախնդիր է համարվում բնակչության զբաղվածության ապահովումը, համայնքում չի գործում որևէ արտադրամաս :

2018թ.-ի ընթացքում ծնվել է 21 երեխա: Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց՝ թվով 206 աշակերտ, 1-ին դասարանում սովորում են 25, իսկ ավարտական դասարանում՝ 9 աշակերտ: Դպրոցում ընդգրկված են 35

աշխատողներ: Համեմատած բարվոք վիճակում է գյուղի բուժ-ամբուլատոր կետը, որում աշխատում է 2 բուժբույր: Համայնքապետարանի աշխատողները բաղկացած են 12 անձից: Բնակչության մեծամասնությունը զբաղված է անասնապահությամբ և հողագործությամբ:

Գյուղատնտեսական աշխատանքներին աջակցելու նպատակով համայնք է ներկրվել ազոտական պարարտանյութ , դիզ. վառելիք և մատչելի գներով տրամադրվել է համայնքի ազգաբնակչությանը: Կատարվել են աշխատանքներ ոռոգման ջրի հիմնախնդիրների լուծման գործում և դրա շնորհիվ կատարվել է ոռոգման ջրի լավ սպասարկում :

Ելնելով կատարված աշխատանքներից և առկա բացթողումներից հավաստիացնում են համայնքի բնակչությանը, համայնքի ավագանուն, որ 2019թ.-ի ընթացքում անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն համայնքում առկա հիմնախնդիրների լուծման, բյուջեյի սեփական եկամուտների ապահովման, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքների բարելավման և պատասխանատվության բարձրացման ուղղությամբ : Խոստանում են իմ ուժն ու եռանդը կներդնեն ի բարօրության մեր համայնքի զարգացմանը և բարգավաճմանը:

Համայնքի առաջնային խնդիրներ են համարվում.

1. Նախակրթարանի բացակայության հարցը:
2. Մշակույթի տան կահավորումը և ջեռուցման համակարգի անցկացումը:
3. Մանկապարտեզի բացակայությունը: